

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք Ե Խ Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

* 27 Ապրիլ նոր կիրակի (Կրիստոնէիլ), — Ա. Փրկչի վահուց մէջ, սովորութեան համաձայն, Ա. Պատարաց մատոյց խոստովանահայր Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Հայրապետեան, եւ քարոզեց Տ. Շաւարչը Վրդ. «Որք ի Քրիստոս ննջեցին, հարեան արգեսք բնարանով, ներկայացուց մաքը իբրև ներկինքի վրայ բացուած պատուհան մը» անոնց համար մանաւանդ որսնք զիտեն իրենց կեանքին մէջ ապրիլ սկզբուն քննեցուն համեմատ քրիստոնէական վարդապետութեան, Այզպիսիներուն համար զերեզմանն ալ սկ փոս մը ըլլալու տեղ պիտի ըլլայ անդրուզքար մը»:

Ա. Պատարագէն յետոյ եկեղեցական դասը ամբողջ ժողովուրդով, զնաց Արարայի հայ քաջերու յիշատակին կանգնուած կօթողին չուրջ հոգինանգտեան պաշտօն կատարել, և յուշարձանին զիմաց խօսեցաւ Տ. Եղիչէ Վրդ. «Որքի 24ի սկամունին առթիւ, Ապրիլ 24ը, ըստաւ, մեր պատմութեան ձայնն է, մեր գարաւոր սովորումներու վերջին փուլերէն մին, այդու մեր պատմութեան մաս կաղմազ, թշնամին մեր զոյսութեան սպառնաց, մենք հակառակ մեր ծանր կորուստին անգամ մը ևս ծառացանք մեր զոյսութեան խարիսխներուն արձակուած վասնզին զէմ և յաջուցեցանք»:

Զի բաւեր միայն 24ի յիշատակին առջեւ միանալ, պէտք է նաև իւրացնել այն ոգին որ մեր մէկ միլիոն մեռեներունը եղաւ և զիրենք մահուան և Աստուծոյ առաջնորդոց»:

* 3 Մայիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւն կատարուեցաւ ի Ա. Յարութիւն մեր վերնատան մէջ, յետ հանդիսաւոր մուտքի և «Հրաշափառայ», որուն նախագահեց Գրե. Տ. Արտաւազզ Արքեպոս.:

* 4 Մայիս Կիր. — Աշխարհամատան. առաւտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ա. Յարութիւն մեր վերնատան մէջ, իսկ Ա. Պատարաց մատուցուեցաւ Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ, քարոզեց պատարագի Դեր. Տ. Արտաւազզ Արք. «Անաւասիկ զնեմ վէմ Ծնտիր պատուական . . . ընարանով, Ցոյց տուաւ որ բոլոր նահապետները և մարգարէները սովասեր էին այս օրուան, ուր հաստատուեցաւ Աստուծոյ Աթոռաը Ա. Գերեզմանի վէմին վրայ: Այսօր է որ Աստուծոյ թագաւորութեան անկիւնաքարը զրուեցաւ, և ասոր վրայ կանգնած հաստատութեան հաւատացողները պիտի չզջշան և չամչնան իրենց կեանքին մէջ, ուրանիտն Քրիստոս-թագաւորը բանութեամբ և զօրաբանակներով չէ որ կը բաղմացնէ իր կետեւրդները»:

* 11 Մայիս Կարմիր Կիրակի. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, Քարոզեց Տ. Շաւարչը Վրդ. ցոյց տալով որ այս օրը յատկա-

նըռող բացատրութիւնը՝ Կարմիր Կիրակի, պատկերն է հայուն կեանքին: Հայ ժողովուրդը Կարմիր Կիրակիին մէջ է ապրեր, երբ իր հայրենի դաշտերուն կարմիր անդաստանները կը վայելէր, և երբ ներկայի զժնզակ պայմաններու մէջ անիկա վերապրիլ կ'ուզէ: Մեր ժողովուրդը անմահութեան գերեզմանին յազմանակով շնորհուած կարմիր օրերու երազն է որ կ'ապրի:

* 18 Մայիս Կիր. — Տօն Երեման Արքոյ Խոսի. Ա. Պատարագ մատուցուեցաւ ի Ա. Յակոբ. քարոզեց Տ. Տիրայր Վրդ. հետևեալ բնարանով. «Եւ զուք յորժամ առնիցէք զամենայն հրամայեալս ձեզ, ասասչիք թէ ձառաքք անդիտանք եմք, արարաք զուք պարտ էաք առնելու, ծաց առաւ Յիսուսի աշակերտներուն տակաւին խակ, միամիտու սկալ ըմբռնումները Անոր իշխանութեանը և զօրութեանը մասին: Անոնք զեւ չէին գիտեր թէ ծառայութեան իշխանութիւնը, զնողութիւնը զուրիմ է թիսուսի քարոզած նոր Աւետարանը: Եւ, տիրոջ ու ձառայի առակով Յիսուս իր անշախննիաց, նոր ըմբռնումն էր որ կը պարզէր կեանքի պարտականութեանցը մասին: Առ այսուուն Խաչի տօնը, պարտականութեան կեանքն է որ կը լուսաւորէ, յիշեցնելու համար մեզ թէ միշտ Գողգոթայէն յատոյ արժանի կրնանք ըլլաւ Համբարձման երանութեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* 2 Մայիս Աւը. — Ամեն, Ա. Պատրիարք Հայրը, հետն ունենալով առժամեայ զիւանապետ Հոգ. Տ. Սերովը Վրդ. Այցելեց տեղւոյս իրավեան Ընդհանուր Հիւպատոս Գէյին, ի ճնորհաւորութիւն երաք Վեհ. Ֆէյսալ Բ. Թագաւորի ծննդեան տարեցարձին:

— Նոյն օրը, Ն. Ամենապատուութիւնը՝ հետն ունենալով Հոգ. Տ. Սերովը Վարդապետը, Փոխխարձարար այցելեց տեղւոյս Ռուս Միարանութեան մէծաւորին, ի ճնորհաւորութիւն Ա. Զատկի տօնին:

— Նոյն օրը, յետ միջօրէի, Երուսաղէմի կառավարչի օդնական Մը. Մանթուրը այցելեց Ամեն. Ա. Պատրիարք Հօր:

* 7 Մայիս Դշ. — Ի զիմաց Ամեն. Ա. Պատրիարք Հօր, առժամեայ զիւանապետ Հոգ. Տ. Սերովը Վրդ. և Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հրազդան Արքեպոյ ներկայ զտնուեցան Կ. Ա. Ա. ի տարեկան հաւաքոյթին:

* 21 Մայիս Դշ. — Երուսաղէմի Եղիպատական Ընդհանուր Հիւպատոս Պէյը այցելեց Ամեն. Ա. Պատրիարք Հօր:

* 26 Մայիս Բշ. — Ն. Ամենապատուութիւնը՝ հետն ունենալով առժամեայ զիւանապետ Հոգ. Տ. Սերովը Վրդ. Վարդապետը Փոխխարձար այցելեց Անդրանիկ Ա. ի պատուածքներու շիւպատական նոր Ընդհանուր Հիւպատոս պէյին: